ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-Ի ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ««ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ և ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»(*Կ-316-07.05.2018-ՊԻՄԻ-011/0*), ««ԱՌԵՎՏՐԻ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Աժ պատգամավոր Անդրանիկ Հարությունյան**	«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերնագիր և հարակից օրենքներ	Հիմքը ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ Սահմանադրություն) 60-րդ հոդվածի 3-րդ մասը այն է՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի, նաև այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով,առաջարկում եմ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի	Առաջարկն ընդունվել է: Նախագիծը լրամշակվել է	Առաջարկն ընդունվել է

			Հանրապետության օրենքի (այսուհետ Օրենք) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության օրենքը «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին»: Առաջարկում եմ «հասարակության և պետության» բառերը օրենքի ամբողջ շարադրանքում փոխարինել «հանրության գերակա շահ» բառերով: Առաջարկվում է նաև համապատասխան փոփոխություններ կատարել նաև այլ օրենքներում:		